Բարի կարուսել

Հիլարի Վոթկինս Լեմոն
(Հիմնված է իրական պատմության վրա)

Երբ Դեմիենը մտավ այգի, նա ուրախ երաժշտություն լսեց: Տատիկը նրան և փոքր քրոջը՝ Ադելին, տանում էր՝ նստելու իր սիրելի կարուսելը: Դա մի զվարճալի խաղ ուներ օղակներով: Դեմիենը ոգևորված ցանկանում էր Ադելին ցույց տալ, թե ինչպես խաղալ:

Շուտով նրանք հերթի մեջ էին: Կարուսելը մեծ էր ու գունեղ՝ բազմաթիվ փորագրված պոնիներով: Ժպտացող երեխաները նստում էին պոնիների վրա և ձեռքով ողջունում էին, մինչ կարուսելն անընդհատ պտտվում էր:

«Եթե եզրից ես պոնի ընտրում, կարող ես օղակներով խաղ խաղալ»: Դեմիենն ասաց Ադելին: «Տեսնու՞մ եք այն փայտերը, որոնք երեխաների ձեռքում են: Իսկ տեսնո՞ւմ եք օղակներով մարդուն»:

Դեմիենը մատնացույց արեց աշխատողին: Նա կանգնեց կարուսելի մոտ՝ պարզելով օղակները: Երբ երեխաները կարուսելով անցնում էին այդ մարդու կողքով, փորձում էին իրենց փայտը անցկացնել օղակի միջով, որպեսզի բռնեն այն: Ամեն անգամ, երբ նրանք բռնում էին օղակը, աշխատողը մի նոր օղակ էր մեկնում նրանց:

Ադելը ոգևորված ծափ տվեց: «Ես ուզում եմ բռնել բոլոր օղակները», - ասաց նա:

Վերջապես նրանք հասան հերթի առջևի մասին: Բայց կարուսելի վրա միայն մեկ ձի էր մնացել:

«Դեմիեն», - ասաց Grand-mère-ը (տատիկը), - ինչո՞ւ մենք թույլ չենք տալիս Ադելին զբաղեցնել այս վերջին դատարկ պոնին, չէ՞ որ նա նախկինում երբեք չի քշել այն: Դու կարող ես քշել հաջորդ հերթին»:

«Լավ», - փնթփթաց Դեմիենը: Նա հետևում էր, թե ինչպես է աշխատողը օգնում Ադելին բարձրանալ շագանակագույն փայլուն պոնիի վրա: Այնուհետև աշխատողը Ադելին փայտ տվեց՝ օղակները բռնելու համար:

Երաժշտությունը սկսվեց, և կարուսելը պտտվել: Դեմիենը և Grand-mère-ը (տատիկը) կողքից հետևում էին Ադելին: Բայց Ադելը փայտը սխալ էր բռնել: Փայտը մեծ բռնակով բռնելու փոխարեն բռնել էր երկար, բարակ ծայրից, որն օգտագործվում էր օղակները բռնելու համար:

«Ադե՛լ, շրջի՛ր փայտդ»: Բայց Ադելը կարծես չլսեց նրան աղմուկի միջից: Երբ նա անցավ օղակի կողքով, նրա փայտը հարվածեց դրան: Բայց բռնակը չափազանց մեծ էր օղակի ներսում տեղավորվելու համար:

«Ադել, քո փա՛յտը»: Դեմիենը կրկին փորձեց. «Դուք չես կարողանա օղակներ բռնել, եթե փայտն այդպես պահես»:

Բայց Ադելը չէր լսում նրան: Նա պարզապես ժպտում ու ծիծաղում էր, մինչ կարուսելը պտտվում էր: Նրա փայտիկը նորից ու նորից խփեց օղակին: Բայց ոչ մի հատ չբռնեց:

Դեմիենը հառաչեց. Ադելը վատնում էր ի՛ր հերթը և ոչ մի օղակ չէր բռնում: Եթե ինքը լիներ կարուսելի վրա, կբռներ բոլոր օղակները:

Երբ պտույտն ավարտվեց, նա վազեց դեպի Ադելը:

«Ես քեզ ասացի, թե ինչպես բռնել փայտը», - բղավեց նա: «Ինչո՞ւ ինձ չլսեցիր. Դու լրիվ սխալ արեցիր»:

Ադելը չէր բղավում Դեմիենի վրա: Նա լաց չէր լինում: Նա պարզապես կանգնած էր այնտեղ և շատ փոքրացած էր թվում:

Դեմիենի սիրտը բաբախում էր, իսկ դեմքը կարմրել էր: Նա զայրացել էր՝ տեսնելով, որ Ադելը բաց է թողնում այդ բոլոր օղակները: Բայց Ադելն առաջին անգամն էր խաղում այդ խաղը: Բացի այդ՝ նա կարծես զվարճանում էր: Մինչև հիմա:

Դեմիենը շատ վատ էր զգում: Նա զղջում էր, որ բղավել էր քրոջ վրա::

«Կներես»,- ասաց նա կամաց: «Ես սխալ վարվեցի»:

Ադելը վեր նայեց:

«Ի՞նչ կասես, եթե ես քեզ որոշ խորհուրդներ տամ օղակներ բռնելու համար»: Ասաց Դեմիենը: «Ես կնստեմ քո կողքին կարուսելի վրա և կօգնեմ քեզ»:

Ադելը գլխով արեց:

Դեմիենը ասաց Grand-mère-ին (տատիկին): «Կարո՞ղ ենք երկու տոմս գնել, որպեսզի Ադելը կրկին փորձի»:

Grand-mère-ը (տատիկը) ժպտաց: «Իհարկե»: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Ֆրանսիայում:

ԱՄՓՈՓԵՑ՝ ԳՈՌԾԵՏԻՄԵՑԻ